գիր արձանագրութիւններով: Որքա՜ն դարեր էին սահել այդ հնութիւնների վրայ, որքա՜ն ազգեր եկել, անհետացել էին, իսկ նրանք տակաւին մնում էին:

Արտամեդում լինել եւ Արտամեդի հոտաւէտ, անուշահամ խնձորը չուտել, դա մի յանցանք է: Երբ պատրաստոեցանք ճանապարհ ընկնելու, նկատեցի, որ մի փոքրիկ աղջիկ, ճանապարհի եզրում նստած, իր առջեւ դրել էր մի մաղ լի խնձորներով: Ես մօտեցայ:

— Ծախո՞ւմ ես:

Նա գանգրահեր գլուխը շարժեց եւ, նստած տեղից չշարժելով, նայեց իմ երեսին: Նրա թշերը կարմրեցան, ինչպէս իր առջեւ դրած խնձորները:

— Որքա՜ն արժէ:

— Հինգ փարայ:

— Մաղն էլ հետը՞:

— Չէ՛, ես էլ հետը:

Արտամեդուհին ցոյց տոեց իր սրախօսութիւնը:

Հինգ փարայ, գիտէ՞ք որքան է, երկու կոպեկ: Մի ամբողջ մաղ լի խնձորներով՝ երկու կոպեկ: Իմ թաշկինակը հազիւ կարողացաւ վեր առնել քառորդ մասը, մնացածը թողեցի:

— Տո՛ւր նրան մի բան աւելի, — ասաց Ասլանը, — երեւում է, որ շատ աղքատ է այդ սիրուն աղջիկը:

Երբ ստացաւ ինձանից մի արծաթեայ հինգ ղուրուշանոց, մօտեցաւ Ասլանին, խնդրում էր նրա ձեռքը համբուրել:

— Մեր կողմերում տղամարդիկ են համբուրում աղջկայ ձեռքը, — ասաց Ասլանը եւ նրա ձեռքը սեղմեց իր շրթունքների վրայ:

Աղջիկը ժպտաց եւ շնորհակալութեամբ հեռացաւ: Նրա գեղեցիկ մարմինը երեւում էր քրքրոած ցնցոտիների ճեղքերից:

Ես նայեցի Ասլանի տխրամած երեսին, եւ այդ երկրորդ անգամն էր, որ տեսնում էի նրա աչքերում արտասուք: Ես հաւատացած էի, որ ամենագեղեցիկ իշխանուհիների ձեռքը չէր համբուրի նա, իսկ այդ աղքատ աղջիկը նրա սիրտը շարժեց:

Մենք նստեցինք մեր ձիաները եւ ճանապարհ ընկանք, խիստ տխուր յիշողութիւններ տանելով մեզ հետ Արտամեդից:

Արտամեդը համարեա մի դուռն է, որտեղից պէտք է մտնել Հայոց Ձորը՝ մեր Հայկ նահապետի սխրագործութեան վայրը: